

Արտաքին առևտրի վիճակագրության բնագավառում գործընկեր-երկրների ցուցանիշներում առաջացած տարբերությունների պատճառները

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ արտաքին առևտրի վիճակագրության բնագավառում գործընկեր-երկրների արտահանման և ներմուծման արժեքային և ծավալային ցուցանիշներում հիմնականում առաջանում են տարբերություններ: Հայելային վիճակագրության վարման արդյունքները ցույց են տալիս, որ չնայած բոլոր երկրները կիրառում են ՄԱԿ-ի կողմից առաջարկվող («Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն. հասկացություններ և սահմանումներ», 2010թ. հրատարակում) արտաքին առևտրի վիճակագրության վարման միասնական մեթոդաբանությունը, այնուհանդերձ գործընկեր-երկրների ցուցանիշներում առաջանում են որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորված են որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով:

Արտաքին առևտրի վիճակագրության վարման պրակտիկայում վիճակագրական տվյալների շեղումներն ըստ առաջացման բնույթի բաժանվում են 3 հիմնական խմբերի.

ա) Մեթոդաբանական.

- համաձայն միջազգային չափանիշների, գործընկեր-երկրները ներմուծվող ապրանքների վիճակագրական արժեքը սահմանում են ՄԻՖ գներով, իսկ արտահանվող ապրանքների արժեքը՝ ՖՕԲ գներով: Ի տարբերություն ՖՕԲ գնի, ՄԻՖ գինը ներառում է նաև տվյալ ապրանքի փոխադրման համար կատարված տրանսպորտային ծախսերը և ապահովագրական վճարները, ինչով պայմանավորված էլ, երկու համեմատվող երկրների համար նույն ապրանքի արտահանման և ներմուծման արժեքային ծավալները դիտարկելու պարագայում, դրանք չեն կարող նույնությամբ համապատասխանել միմյանց և ունենալ միևնույն մեծությունը,
- գործընկեր-երկրների կողմից արտաքին առևտրի բնագավառում կիրառվող ընդհանուր և հատուկ համակարգերի առանձնահատկություններ, որի համաձայն ընդհանուր համակարգի դեպքում երկրի մաքսային տարածքը համապատասխանում է տնտեսական տարածքին, իսկ հատուկի դեպքում՝ ոչ (ըստ ՄԱԿ-ի կողմից առաջարկվող մեթոդաբանության երկուսն էլ կիրառելի են),
- հնարավոր են շեղումներ արտաքին առևտրի գործառնությունների ձևակերպման հետ կապված, պայմանավորված ապրանքի ծագման/նշանակման երկրի սխալ գրանցման հետ,
- մի շարք ապրանքների (թանկարժեք քարեր և մետաղներ, էլեկտրաէներգիա, բունկերային վառելիք, բաց ծովից որսած ձկներ և վերանորոգման նպատակով տեղափոխված ապրանքներ) առանձնահատկություններով պայմանավորված, դժվարություններ են առաջանում տարբեր երկրների մաքսային մարմինների մաքսային ձևակերպումների միասնական մոտեցումները օգտագործելիս,
- հնարավոր են տարբերություններ ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող մաքսային հսկողության ենթակա ապրանքների մաքսային ձևակերպումների մոտեցումներում,
- ապրանքի մաքսային արժեքի որոշման մեթոդների տարբերություններ (գործարքի գին, շուկայական գին և այլն):

բ) Տեխնիկական.

- ծագման երկրում ապրանքների արտահանման առաքման գրանցման ամսաթվի և ընդունող երկրի գրանցման ամսաթվի միջև առաջանում է ժամանակային տարբերություն, որը միջազգային առևտրում միջինում կազմում է 3-4 շաբաթ և տատանվում է կախված երկրի աշխարհագրական դիրքից, օգտագործվող փոխադրամիջոցի տեսակից, տեղափոխվող ապրանքների բնույթից,
- գործընկեր-երկրի բնորոշման (առևտուր անող երկիր, պայմանագիր կնքող երկիր, ապրանքի ծագման երկիր) հատկանիշի տարբերություն: Օրինակ, «պայմանագիր կնքող երկրի» հատկանիշի դեպքում, հնարավոր է, որ տվյալ ապրանքը տվյալ երկրից առաքվի մեկ այլ երկիր, և ըստ այդմ, առաքող (արտահանող) երկրի կողմից այն ձևակերպվի որպես «արտահանում», իսկ պայմանագրի մյուս կողմ հանդիսացող երկրի կողմից տվյալ ապրանքը չգրանցվի: Կամ, օրինակ, ապրանքը՝ վերջնական նշանակման երկիր տեղափոխելու (հասցնելու) հետ կապված այն արտահանող կողմը, հրնթացս, կարող է փոխել դրա նախօրոք ձևակերպված վերջնական նշանակման երկիրը և արտահանել մեկ այլ՝ երրորդ երկիր (ըստ ՄԱԿ-ի կողմից առաջարկվող մեթոդաբանության երեքն էլ կիրառելի են),
- որոշ դեպքերում արտահանող երկրի կողմից առաքված ապրանքը չի հասնում նշանակման երկիր՝ ապրանքի վնասվելու կամ տարանցիկ երկրներից մեկում վերաձևակերպվելու պատճառով,
- շատ երկրներում կան սահմանափակումներ առանձին ապրանքների վերաբերյալ տեղեկատվության բացահայտման հետ կապված, օրինակ, ազգային սահմանները հատելիս գործընկեր-երկիրը կարող է միտումնավոր չգրանցել արտահանվող կամ ներմուծվող ապրանքը, մինչդեռ մյուս գործընկեր-երկրում տվյալ ապրանքը գրանցվում է:

գ) Վիճակագրական տվյալների դիտավորյալ աղավաղում.

- ներմուծողները կարող են հայտարարագրել ապրանքներ կեղծ ապրանքային ծածկագրերով, ինչպես նաև միտումնավոր նվազեցնել ներմուծվող ապրանքի արժեքը, մաքսատուրքերը նվազագույնի հասցնելու նպատակով: Արտահանողները կարող են միտումնավոր գերազնահատել արտահանվող ապրանքների քանակը և արժեքը վերադարձվող ԱԱՀ-ի ավելացման նպատակով,
- առևտրային հարաբերությունների մեջ գտնվող կողմերը կարող են դիտավորյալ սխալ նշել գործընկեր-երկրին:

The reasons for the differences in indicators of partner countries in the field of foreign trade statistics

The international experience shows that the differences are happening in the partner countries' exports and imports value and volume indices in the field of foreign trade statistics. The results of the maintaining of mirror statistics show that although all countries use the UN offered common methodology of the maintaining of foreign trade statistics ("International Merchandise Trade Statistics: Concepts and Definitions 2010") however, there are certain differences in the indices of the partner countries that are stipulated by some objective and subjective factors.

In the foreign trade statistics maintaining practice the deviations in statistical data by the nature of origin are divided into 3 main groups:

a) Methodological

- according to the international standards, the partner countries define the statistical value of imported goods at CIF prices, for exported goods at FOB prices. In difference with FOB price the CIF price also includes the transportation costs and insurance charges for given goods and stipulated by this, in case of observation of the value volumes of export and import of the same goods for two comparable countries, they may not fully correspond to each other and have the same size.
- general and special features used in the field of foreign trade by partner countries, according to which, in case of common system the custom territory of the country corresponds to the economic area in special case, it doesn't (according to the UN proposed methodology the both are applicable),
- possible deviations related to the formulation of foreign trade operations, due to the wrong registration of goods origin / destination country,
- conditioned with the peculiarities of some goods (precious stones and metals, electricity, bunker fuel, caught fish from the open sea and transported goods for repair purposes) the difficulties arise when using the customs formalities' unified approaches of different countries customs authorities,
- some differences are possible in the customs formalities' approaches for goods subject to custom control transported by the natural persons,
- differences of the methods of determining the customs value of goods (transaction price, market price and so on).

b) Technical

- the time difference occurs between the origin country's goods export delivery registration date and the host country's registration date that in the international trade, in average takes 3-4 weeks and varies depending on the geographic location, the type of transportation, the nature of the transported goods,
- difference of peculiarity's definition of partner-country (trading country, contracting country, goods origin country). For example in the case of "contracting country", it is possible that the given goods of this country may be delivered to another country, and so they can be registered by the delivering (exporting) country as "export" and may not be registered by the other contracting party. Or, for example, the exporting country is able to change the final destination country formulated in advance and export to another third country related to the transportation (delivery) (according to the UN proposed methodology the three options are applicable),
- in some cases, the goods delivered by the exporting country don't reach the country of destination because of being damaged or being reformulated in a transit country,
- in many countries there are restrictions on the disclosure of information related to the certain goods, for example, when crossing the national borders the partner country may intentionally not register the exported or imported goods, while the other partner-country is registering this product.

C) Intentionally distortion of statistical data:

- importers can declare goods with false product code, as well as they can intentionally reduce the cost of imported goods to minimize the customs duties. Exporters can intentionally overestimate the quantity and cost of exported goods with the purpose to increase the returnable VAT. The parties in trade relations may intentionally indicate incorrect the partner country.